«Իրազեկ Քաղաքացիների Միավորում» Խորհրդատվական ՀԿ
"Union of Informed Citizens" consulting NGO
ք. Երևան 0038, Աբելյան փող. 6/1, սենյակ 411Ա 6/1 Abelyan str., room 411A, Yerevan 0038
+374 (0) 11 355042, UIC.am, uicarmenia@gmail.com

**ՀՀ ներքին գործերի նախարար,**
**ներքին գործերի նախարարին կից հասարակական խորհուրդի նախագահ,**
**ոստիկանության գեներալ-մայոր**
**Վահե Ղազարյանին**

Խնդրում ենք դիտարկել «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպությունը, ի դեմս Արտաշես Սերգոյանի, ՆԳ նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկելու համար:

«Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպությունը երկար տարիների ընթացքում ակտիվորեն աշխատել է ոստիկանության բարեփոխումների ոլորտում՝ կարևորելով թափանցիկությունն ու ժողովրդավարական սկզբունքները:

Կազմակերպությունն իրականացրել է մի շարք ծրագրեր և հետազոտություններ, որոնք նպաստել են ոստիկանության բարեփոխումների առաջխաղացմանը, հանրային վստահության բարձրացմանը, ներկայացրել դրանք լայն հանրությանը և ոլորտի հիմնական դերակատարներին ինչպես Երևանում, այնպես էլ հանրապետության մարզերում:

Չնայած այն հանգամանքին, որ որոշ դեպքերում Ներքին գործերի նախարարության և «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության դիրքորոշումները, գործընթացների վերաբերյալ մեկնաբանությունները կարող են տարբերվել միմյանցից, բայց, այնուամենայնիվ, կազմակերպության առաջարկությունները Ներքին գործերի նախարարության կողմից հաճախ ընդունվում են, ինչը վկայում է աշխատանքի արդյունավետության, պրոֆեսիոնալիզմի և նախարարությունում տեղի ունեցող բարեփոխումների ուղղությամբ մեր աշխատանքների կարևորության մասին:

Կազմակերպությունն իր գործունեությամբ՝ հանդիպումներով, հանրային քննարկումներով, սեմինարներով և այլ ձևաչափերով փորձում է նաև կապող օղակ հանդիսանալ հանրության,

Ներքին գործերի նախարարության և քաղաքացիական հասարակության միջև՝ ոստիկանության բարեփոխումների հարցում:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ժողովրդավարական համակարգերում հասարակական կազմակերպությունների ներգրավումը պետական կառավարման մեջ կարևոր է թափանցիկության և արդյունավետ կառավարման համար:

Տարբերվող կարծիք ունեցող հասարակական կազմակերպությունների հետ աշխատանքը նպաստում է բազմակողմանի քննարկումների և ավելի լավ որոշումների կայացմանը:

Ժողովրդավարական մի շարք երկրներում ոստիկանության բարեփոխումների գործընթացում ակտիվորեն ներգրավվում են հասարակական կազմակերպությունները, ինչը նպաստում է հանրային վստահության բարձրացմանը և բարեփոխումների հաջողությանը:

Մեր մասնակցությունը հասարակական խորհրդի կազմում կնպաստի ոստիկանության բարեփոխումների շարունակականությանը և թափանցիկ կառավարման սկզբունքների ամրապնդմանը:

Մենք համոզվածենք, որ մեր կազմակերպությունը կարող է էական ներդրում ունենալ հասարակական խորհրդի աշխատանքներում՝ աջակցելով ՆԳ նախարարությանն իր առաքելության իրականացման գործում:

Հարգանքով՝

Աշխեն Մուշեղյան
Գործադիր տնօրեն
«Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ